## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ Ու Մ

05 օգոստոսի 2021 թվականի N 47

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 5-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը.

1. Համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալությամբ տրամադրելու մասին.

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
2. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2021 թվականի N 48

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշման պահանջները՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին մրցութային կարգով վարձակալությամբ հատկացնել սխեմայով ներկայացված (համաձայն հավելվածների) գյուղատնտեսական նշանակության 8,28283հա վարելահող և 1,34978հա այլ հողատեսք:

2. Վարձակալությամբ տրամադրվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 2,69671հա (որից վարելահող՝ 2,15323հա, այլ հողատեսք՝ 0,54348հա) 07-013-0152-0018 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի համար վարձավճարի մեկնարկային գին սահմանել 40000 (քառասուն հազար) դրամ:

3. Վարձակալությամբ տրամադրվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 4,57265հա (որից վարելահող՝ 4,28287հա, այլ հողատեսք՝ 0,28978հա) 07-013-0151-0004 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի համար վարձավճարի մեկնարկային գին սահմանել 60000 (վաթսուն հազար) դրամ:

4. Վարձակալությամբ տրամադրվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 1,84673հա 07-013-0154-0087 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի համար վարձավճարի մեկնարկային գին սահմանել 40000 (քառասուն հազար) դրամ:

5. Վարձակալությամբ տրամադրվող՝ պետական սեփականություն հանդիսացող 0,51652հա 07-013-0136-0088 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար վարձավճարի մեկնարկային գին սահմանել 20000 (քսան հազար) դրամ:

6. Հողամասերը տրամադրվում են առանց կառուցապատման իրավունքի՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

6. Հանձնարարել մրցութային հանձնաժողովին վարձակալության մրցույթն անցկացնել 2021 թվականին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՋԱՔԱՐԻԱ
2. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ